



Միսաք Մեծարեւնց

Անդարձ

Լուսնի լոյսը ծառերէն ծաղիկի պէս էր կախուեր.
Ապրիմ-մեռնիմ մը ձեռքըս՝ սիրոյս ճամբան ես ինկայ.
Ա՛հ, լըսէի՛ր, տերեւին հովը ինչեր կը հծծէր:
“Կը սիրէ՛ զիս, չի սիրեր, քի՛չ մը, բընա՛ւ... տարփագի՛ն...”
Մէկիկ մէկիկ փետտեցի, գաղձերուն հետ ձանձրոյթիս
Եւ արիւնող փուշին հետ սրտիս մխտող թախծանքին:
Ինչպէ՛ս կրկնեմ բարբառը երիցուկին մարգարէ,
Հէ՛ք ծաղիկ, զոր խեղդեցի վայրկեանի մը մէջ անյոյս՝
Ուր ձեռքիս մէջ կը սուրար ձեռքիդ երագն յամպարէ:
Ինչպէ՛ս կրկնեմ տաղերը նարկիսներուն ու վարդին,
Ու վիպերգը՝ կեռասէ բաղրոններուն վրայ ձիւնող
Ճերմակ բուրեան շափրակի բաղիլներու մեղեդի՛ն:
Շամանդաղին մէջ՝ թել թել կ’իյնայ ջրցայտքն անտարբեր.
Լուսնի լոյսին կ’երկարին առուակի գոյգ մը թելեր,
Ու շրջավայրը կ’ըլլայ աղապատանք մը տարփոտ:
Ճամբուն վըրայ կը կրկնէ աղբիւրն անվերջ հեքէաթներ,
Գոռն հիացիկ մանուկի աչքի մը պէս է բացուեր.
Զըրարեքին մէջ կ’ուրուագրէ լուսինն աղջկան մը պատկեր:
Թաւուտին մէջ թեւաբաց, ահա՛, տեսիլդ է կայներ.
Այծտերեւին հոտեւան մատերն հերքող կը շոյեն,
Ու տերեւներ վեհերոտ կու տան իրենց համբոյրներ:
Մառախտողով կը լենայ հիր շրջագիծն երագիս,
Ուր ամբարձիկ մարմինիդ հըպարտ շուշանն է կեցեր.

Հոգւոյդ կարմիր կարօտին, ա՛հ, պատարագ ըրէ զիս:
Ապրիմ-մեռնիմ մը ձեռքըս՝ նորէն դաշտերն ես ինկայ
Ու տենչանքներըս գրկած լացի մարմինդ ըսպիտակ.
Դարձիս՝ ճամբան՝ սառե՛ր էր՝ տամուկ՝ լո՛յս ու լուսինկայ...